

խարհիկ անձին Կիւրեղ սպասաւոր բանի, հրամանաւ եւ արգեամբք սրբամիտ եւ կուսակրօն քահանայի Մարտիրոսի: Այլ արդ... եհաս եւ մերում անարժանութեանս (գրիչն ասէ) դիմել գալ, հասանել յաշխարհս արեւելից, դեգերել առ ոտս աստուածամերձ եւ արգիւնարուխ իմաստից՝ վերասացեալ հաւատոյ հզօր հիմանցդ (Դաւիթ եւ Նսայի վարդապետս ակնարկէ), որ... (Աստ աւարտի էջն եւ մատենն, ասէ հայր Սուքիաս Պարոնեան) բարունապետին Մարտիրոսի է սուրբ Աւետարանս:

— Նուաստս ի շարս ուսուցչապետաց Դաւիթ շնորհեցի զսուրբ Աւետարանս սուրբ Աստուածածնին, եւ առաջնորդի սուրբ Անապատին՝ Մկրտչին հոգեւոր որդեկին իմոյ, ի յիշատակ հոգւոյ իմոյ:

*Փակագծի մէջ եղածները Փիրղալէմեանն է աւելացրել: Այստեղ յիշուած Դաւիթը Քորայրեցիին չէ, այլ Նչեցու բնկերը, Գլաճորի ուսուցչապետ: Իսկ «տէր Ստեփանոս»-ը Օրբէլեան Ջալալ իշխանի որդին, Տարսային Օրբէլեանի եւ Մինա Խաթունի թոռը, յաջորդը Յոհան Օրբէլի: Տես եւ հետեւեալ Բ. 24 յաւելումը:

ՅԱԽԵԼՈՒԱԾ Բ. 24.

Ա. Գիրք. 200.

Փիրղալէմեան նշխարք եւն. Ամրդօլուի վանքում. 1328 ՉՀէ: Թիւ 83. մի Աստուածաշնչէ. 1881. Յուլ. 1. ի Բաղէշ, ի Վանս Ամրտօլոյ:

Փառք անսկզբանն եւ սկզբանն ամենայնի...:

Վասն որոյ ես նուաստս յամենայնի Առաքել (Հաղբատեցի վարդապետս) ցանկացող եղէ այսմ Աստուածաշունչ տառիցս հին եւ նոր կտակարանացս. եւ ետու դրել զսա մեծաւ փափագանօք եւ ջերմ սիրով... Յարեթեանս տումարի ՉՀէ (1328), որ էր մեծ չրջանին ՄԽԲ. ի յառաջնորդութեան արքեպիսկոպոսութեան գաւառից Սիւնեաց տէր Ստեփաննոսի մականունն Տարսայիճի, անարատ եւ մաքրամիտ ուղղադաւան քաւչապետի՝ զարդարեալ տեսականաւ եւ գործնականաւ եւ արիականաւ զօրեղեղեալ առաւելեալ ի պէտս շինութեան եկեղեցեաց, որ եւ մեք իսկ ականատես եղաք եւ վայելեցաք ի բազում խնամոց նորին, որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի: Եւ յաշխարհակալութիւն մեծ ինքնակալին Բուսայիդ կոչեցեալ՝ յազգէ եւ ի թուանց սերեալ տիեզերական իշխանին Չնկուղ յորջորդեալ, որ եւ զաշխարհս ունէր, սկսեալ ի Պոնտոս ծովէն մինչեւ ի ծովն Կասբից: Եւ ի թագաւորութեան հայոց Լեւոնի, նստեալ ի Գահն Կիլիկեցւոց: Եւ տանն Վրաց եւ մեծաց Հայոց Գորգայ: Եւ յաւուրս տէրութեան մեծ իշխանաց իշխանին տանս Սիսակայ Բորթլի, ամենաբարեպաշտի եւ քաջի եւ միշտ յաղթողի, որ էր խստակրօն ցալգաջան եւ գիշերափաստակ, ծնրադրող, առաւել քան զմիանձուկն քարանձաւաց, եւ երկու արե-

դակնանման հարազատ որդոցն Բէշքէնայ եւ Իւանէի Եւ ամենայն զովութեամբ բարգաւաճեալ ամէնօրհեա ամուսնոյն իւրոյ Վախախին, որք են սոքա յարանց եւ ի կանանց ընտրեալք, եւ ի վեհից հարց երեւեալք եւ ի գեղեցկաստեղն ոստոց ընծիւղեալ պտուղք, գովեալ եւ լի հաւատովք եւ կատարեալք ամենայն գործովք առաքինութեան. ըստ որում հայցեմ ի ստեղծողէն բնաւից բարձր եւ հաստատուն առնել զաթոռ իշխանութեա սոցա ի վերայ երկրի, զի կացցեն, մնացեն ընդ արեւու յառաջ քան զլուսին յազգէ մինչեւ յազգ զարմօ, եւ զաւակօք իւրեանց. որ եւ զմեզ ընկալան բազում խնամովք եւ դթով. վարձահատոյցն Քրիստոս հատուցէ նոցա եւ զաւակաց իւրեանց կրկին կենօք եւ երկո ժամանակօք աստ եւ ի հանդերձելումն:

Դարձեալ յեռեալ հիւսնացի ընդ յիշատակ է լու որք... (մի բառն մաշեալ էր) յիշման արժանաւոր ծնողաց զաւակքն՝ ի քաջ եւ արիական ազգէ սերեա ծնունդքն՝ Խաղարկեանցն Պոռչայ եւ իւրոցն, որք եւ ժառանգ հայրենի տանն իւրեանց, զհեղահոգի եւ զողջախողն (ս!)՝ Ամիր Հասան, եւ զքաջն եւ զարին հոլովն Վասակ, եւ զկորովամիտն ամիր Ասաթն, եւ զտիովք մանուկն՝ զխայտակն եւ զքաջազանդուր Ջում, որք են տէր եւ իշխեցող սուրբ մենարանիս եւ տանս դպրոցական ժողովելոց, որոց տացէ Տէր Աստուած զբազմ եւ զանուն քաջութեան նախահարցն իւրեանց եւ յիշատակ նոցա օրհնութեամբ եղիցի:

Արդ զրեցաւ Աստուածաշունչ տառս այս յառաջ նորդութեան լուսաւոր առնս Աստուծոյ, մեծի սովեստոսի, Նսայի վարդապետի, յորում եւ յայսմ ժամանակի փայլէր ի գահս իմաստասիրութեան իբրեւ զարեւակն ի կորնթարթն վերին, ոչինչ ընհատ (ս!) առաքելոց եւ ի մարգարէից, ընտրեալ ընտրելոց, ծագկես ծերութեամբ եւ բարգաւաճ առաքինութեամբ վար խարաղնազգեստ եւ կիրս մատիրոսական (ս!) յանձն կրելով յոգնաջան աշխատութ. եւ գիշերական տքնութեամբ, զգիրս աստուածային ի վերայ բաղկաց իւր բարձեալ, մեկնէր... զհետ մտեալ սա եւ... եւ ցանկութիւն աշխարհի... (երկու երեք բառ մաշեալ էլ ի հնութենէն) ոչ գտանէ պնդեալ ի մեռելութիւն մարմնոյն, ընդ կրունկն հարեալ զիշխան աշխարհիս այսրիկ, ճոխաբար հետեւելով ընդ երկնաշու պողոտայ մտեալ ընդ առաջին կողմն վարագուրին, ծերացեալ լի իմաստութեամբ, ցուպ ի ձեռին առեալ, զտհաս զանիմաստ համբակս ժողովէ ի փարախս իմաստութեան, ընդ որ եւ այժմ է տեսանել, զի ի բազում գաւառաց կան դեգերեալ առ պէտս վարժից եւ տէլէս իմաստից. իսկ սա գործէ եւ կազմէ զխոսանացեալ անդաստանս իւրոց աշակերտեալ մանկանց ի վեր բողբջէ արս կատարեալս իւրով որոշմամբ եւ քաղցրուստ վարդապետութեամբ: Եւ կատարեցաւ առսա այն բարեթէ որ հանէ զանարգն ի պատուականէն, բերան կոչեցի. նաեւ այլ եւս բազում եցոյց մեզ գութ խնամ, որ եւ ի գիրս Աստուածաշունչ բազում օրինաշնորհաց, այլ եւ ի խրատատուութիւն ի բանս եւ յառգանութիւնս եւ ի ստիք (ս!), որոյ յիշատակ սոյ